

Թիւ 26168
Դեկտեմբեր 20, 1978

Հոգեշնորհ

Տ. Սուրէն Վրդ. Զինջինեան
Հովհանն Ս. Շողակաթ Ծկեղեցւոյ
Գէլվի.

Սիրելի Հայր Սուրէն,

Առաջած ենք Դեկտեմբեր 10, 1978 թուակիր ժեր նամակը:

Ուրախ ենք որ կարելիութիւնը սաեղծած էք մեկնելու Մէմ-
ֆիս եւ Սուրբ ծննդեան արարողութիւնը կատարելու այդ շրջանի
մեր համայնքին մէջ:

Կը շնորհաւորենք Նոր Տարին եւ Սուրբ ծնունդը՝ ժեզի
մաղթելով առաւել առողջութիւն եւ աստուածահանոյ ժեր գոր-
ծերուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՅՈՒՄ ԱՐԵՎԻ ԽԱՆՊԱՌՈՒ
Առաջնորդ

ՍՈՒՐԲ ՇՈՂԱԳԱՔ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ



Holy Shoghagat
Armenian Church

Դեկտեմբեր 10, 1978

Գերաշնորհ՝
Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Առաջնորդ Ամերիկայի Հայոց Թեմի
Նիւ-Նորք.

Սիրելի Սրբագան Հայր,

Կուզեմ յուսալ թէ քաջառողջ վիճակի մէջ էք:
Ընդառաջելով Բարեշնորհ Մինաս Սրկ. Մութաֆեանի խնդրանքին, կը ծրագ-
րեմ Մէմֆիս մեկնիլ Հինգշաբթի, Յունուարի 4-ին, Ս. Պատարագ մատուցանելու
յաջորդ օրը, Աւրբարթի երեկոյեան, Ս. Մանդեան տօնին առթիւ:

Մինաս Սրկ.-ի փափաքն էր նաեւ որ ներկայ գտնուէի եւ խօսք առնելի ի-
րենց պարահանդէսին, Եաբաթ օր իրիկունք: Սակայն կարելի չեղաւ գոհացում տալ
իր փափաքին, նկատի ունենալով որ նոյն օրը մեր եկեղեցին մէջ արարողութիւն
պիտի կատարուի:

Կը մատչիմ ի համբոյր Զեր Ս. աջոյն:

Խոր նարհ աղօթակից
Սուրբ Վրդ Չինչին կամաց
Սուրբ Վրդ Չինչին կամաց

Թիւ 26400
Մայիս 29, 1979

Հոգեշնորհ
Տ. Սուլբէն Վրդ. Զինչինեան
Հովիւ Ս. Ծողակաթ Եկեղեցւոյ
Նորագած ծխական Խորհուրդի
Պէլվիւ.

Սիրելի Հայր Սուլբէն,

Առաջած ենք Մայիս 16, 1979 թուակիր ձեր նամակը, որով
կը տեղեկացնէք ծխական Խորհուրդի անդամներէն Սէմ Ներսէս-
եանի ցաւալի սպանութեան մասին:

Ենք իորագած ցաւակցութիւնը կը յայտնենք ծխական Խոր-
հուրդի եւ ողբացեալի հարազաններուն:

Այսու գիրով կը հաստատենք Տիար մէք Գորգոյեանը իրրեւ
անդամ ծխական Խորհուրդից: Ան պիտի պաշտօնավարէ մինչեւ ա-
ւարտումը ողբացեալ Սէմ Ներսէսեանի շրջանին, ըստ Թեմական
Խանոնադրութեան:

Այս առթիւ կը տեղեկացնենք որ առանձին ծրարով ձեզի պի-
տի դրկուին Թեմական Խանոնադրութեան եօթը օրինակները:

Սիրոյ ողջունիւ


ԹՈՐԳՈՄ ԱՐԵԲՈՒԽԿՈԴՈՒ
Առաջնորդ

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

P.O. BOX 1187 + 400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-233-9453

VERY REV. SOOREN CHINCHINIAN, PASTOR



Մայիս 16, 1979

Բարձրաշնորհ՝
Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի
Նիւենորդ.

Սիրելի Սրբազն Հայր,

Մեր եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի հաւատարիմ անդամներէն Սէմ Նէրսէս-
եանի անակնկալ ու ցաւալի սպաննութեան հետեւանքով ըստ կանոնադրութեան հը-
րաւէր ուղղեցի յաջորդ առաւելագոյն քուէ ստացած անձին, Ճէք Գորգոյեանին
որպէսզի փոխարինէ Սէմ Նէրսէսեանը, ամբողջացնելու համար անոր պաշտօնավար-
ութեան շրջանը:

Ուստի պիտի խնդրէի Ձերդ Սրբազնութենէն որ բարեհաճէիք հաստատել
Ճէք Գորգոյեանի հանգամանքը որպէս Ծխական Խորհուրդի նոր անդամ:

Նաեւ կը փափաքիմ Ձերդ Սրբազնութեան հաղորդել որ կարիքը ունինք կա-
նոնադրութիւն-գրքոյկ ներու, մօտաւորապէս եօթը օրինակ: Նոյնիսկ իմ տրամադր-
ութեան տակ գտնուող օրինակը հին տպագրութիւն է:


Ժամանակէ մը իվեր նկատած եմ թէ մեր եկեղեցին չի ստանար Առաջնորդա-
րանի պաշտօնաթերթը: Գոհ պիտի ըլլայի եթէ մեր եկեղեցիին դրկուէր Առաջնորդ-
արանի պաշտօնաթերթը, Հայատար եւ Անգլիատար:

Կը յայտնեմ կանխաւ շնորհակալ ութիւններ եւ կը մատչիմ ի համբոյր Ձերդ
Սրբազնութեան Ս. աջոյն:

Առաջնորդ Տիգրան Չինչինյան
Սուրբ Վահագին Պատրիարք Առաջնորդ Առաջնորդ Առաջնորդ

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH



P.O. BOX 1187 + 400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-233-9453

VERY REV. SOOREN CHINCHINIAN, PASTOR

Ապրիլ 24, 1979

Բարձրաշնորհ՝
Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Առաջնօրդ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի
Նիւ-Ծորք.

Սիրելի Սրբազան Հայր,

Ենորհակալութեամբ ստացայ Զերդ Սրբազնութեան Ապրիլ 19, 1979 թուակիր
նամակը որով ակնարկութիւն կ'ընէիք Ծիսկան Խորհուրդի ատենագրութիւններուն
ինչպէս նաեւ իմ անձնական ամսական տեղեկագիրներուն առաջնօրդարան ղրկուած
չըլլալուն մասին:

Շատ ապահովաբար գոյութիւն ունի խոշոր թիւրիմացութիւն մը գոր ինծի
համար անկարելի եղաւ բացատրել: Ես ամենեւին տեղեակ չէի այդ պարտաւորութեան
կամ պահանջքին մասին: Եթէ տեղեակ ըլլայի, բնականաբար ղրկած պիտի ըլլայի
զանոնք որովհետեւ նման բան մը ոչ կը նայ անտեսուիլ եւ ոչ ալ յետաձգուիլ
երեք ամիսով....:

Պիտի ջանամ այդ Ծիսկան Խորհուրդի ատենագրութիւնները եւ իմ անձնա-
կան տեղեկագիրները կարգի դնել եւ ապա առաջնօրդարան ղրկել մօտիկ ապագային:

Կը մատչիմ ի համբոյր Զերդ Սրբազնութեան Ս. աշոյն եւ կը մնամ

Խոնարհ աղօթակից
Առարկա վրա Ծիսկան
Սուրէն Վրդ. Չինչինիան

Թիւ 26844
Ապրիլ 19, 1979

Հոգեշնորհ
Տ. Սուրեն Վրդ. Զինջինեան
Հովհան Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Պէլվիլ.

Սիրելի Հայր Սուրեն,

Տեզի յանմնարարած ենք որ ծխական Խորհուրդի ժողովներու առենազրութիւնները, ինչպէս նաև ձեր անմնական ամսական տեղեկագիրները մեզի դրկեք ամէն ամիս կանոնաւոր կերպով:

Երկար ատենէ ի վեր ոչ առենազրութիւնները եւ ոչ ալ ձեր տեղեկագիրները ստացած ենք:

Այսու գիրով կը թելադրենք որ 1979 Յունուարէն սկսեալ ծխական Խորհուրդի ժողովներու առենազրութիւններն ու ձեր ամսական տեղեկագիրները մեզի փութացնեք առաջին առիթով:

Տեզի կը ցանկանք հոգիի ու մարմնի առաւել առողջութիւն եւ յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՅՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 26515
Սեպտեմբեր 17, 1979

Հոգնշնորհ
Տ. Սուրէն Վրդ. Զինչինեան
Հովհանն Ս. Շողակաթ Ակեղեցւոյ
Պէլվիլ.

Միրելի Հայր Սուրէն,

Սաացած ենք Սեպտեմբեր 7, 1979 թուակիր ձեր համակը, որով մեզ
կը հրաւիրէք Եկեղեցւոյդ օժման առեղարձի հանդիսութեանց նախազահ-
լու:

Ընորհակալ ենք ձեր հրաւիրին համար, սակայն կը ցաւինք որ այս
աարուան համար ձեր տուած թուականները յարմար չեն մնաի:

Մենք կրնանք Պէլվիլի մեր համայնքը այցելել 1980 Մարտ 23-24
շաբաթավերթը: Համեցէք շուտով մնաի տեղեկացնել ծխական Խորհուրդիդ
որոշումը յիշեալ թուականին մասին՝ որպէս զի վերապահենք այդ թուա-
կանը:


Զեզի եւ ծխական Խորհուրդիդ կը մաղթենք բացառողջութիւն եւ Եկե-
ղեցանուէր ձեր գործերուն յանողութիւն:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՎԻՆՈՎՈՎ
Սուրէնորդ

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH



P.O. BOX 1187 + 400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-233-9453

VERY REV. SOOREN CHINCHINIAN, PASTOR

Սեպտեմբեր 7, 1979

Բարձրաշնորհ՝

Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի
Նիւ-Ծորք.

Սիրելի Սրբազն Հայր,

Այսու կուզեմ Զերդ Սրբազնութեան Հաղորդել թէ կը ծրագրենք տօնել մեր
եկեղեցւոյ օծման տարեդարձը Սոյեմբերի 18-ին։ Ուստի Հաճոյքն ունիմ Հրաւիրել
Զերդ Սրբազնութիւնը որպէսզի նախագահէք կատարուելիք տօնախմբութեանց եւ Զեր
բարձր ներկայութեամբը պատուիք մեզ։

Արդեօք վերոյիշեալ թուականը կը յարմարի Զերդ Սրբազնութեան ժամանակա-
ցոյցին թէ ոչ։ Նթէ չի յարմարիր, պիտի խնդրենք որ նկատի ունենաք Դեկտեմբեր
2-ը։ Այն պարագային երբ Դեկտեմբեր 2-ն ալ անպատեհութիւն ներկայացնէ, կը փա-
փաքինք իմանալ Զեզի յարմար թուականը։

Կը յայտնեմ իմ կանխայայտ շնորհակալութիւններն ու բարեմաղթութիւնները։

Խոնարհ աղօթակից՝
Առաքել Արք-Շինուանան
Սուրէն Վրդ. Զինչինեան